Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-1307[2]-06.04.2026-ՖՎ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 64-րդ հոդվածի 2-րդ մասի 47-րդ կետի «ժբ» ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ժբ. օրենքով սահմանված կարգով բանկի կամ վարկային կազմակերպության սեփականությունը դարձած՝ անհատ ձեռնարկատեր եւ նոտար չհամարվող ֆիզիկական անձանց մինչ այդ պատկանող գրավի առարկայի օտարումը, ինչպես նաեւ օրենքով սահմանված կարգով հետադարձ հիփոթեքի պայմանագրի համաձայն բանկի կամ վարկային կազմակերպության սեփականությունը դարձած՝ անհատ ձեռնարկատեր եւ նոտար չհամարվող ֆիզիկական անձանց մինչեւ այդ պատկանող այն անշարժ գույքի օտարումը, որը այդ նույն հետադարձ հիփոթեքի պայմանագրի համաձայն ծանրաբեռնված էր հետադարձ հիփոթեքով: Սույն ենթակետի կիրառության իմաստով՝ գրավի առարկան (հետադարձ հիփոթեքով ծանրաբեռնված անշարժ գույքը) մինչեւ բանկի կամ վարկային կազմակերպության սեփականությունը դառնալը համարվում է անհատ ձեռնարկատեր եւ նոտար չհամարվող ֆիզիկական անձանց պատկանող, եթե գրավի առարկայի (հետադարձ հիփոթեքով ծանրաբեռնված անշարժ գույքի) նկատմամբ սեփականության իրավունքի վկայականում նշված չէ, որ այն պատկանում է տվյալ անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին,»:

Հոդված 2. Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր 19.1-ին կետ հետեւյալ բովանդակությամբ.

«19.1) Հետադարձ հիփոթեքի պայմանագրի շրջանակներում ստացվող պարբերական ամենամսյա վճարումները.»:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կ-1307[2]-06.04.2026-ՖՎ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 64-րդ հոդվածի 2-րդ մասի 47-րդ կետի «ժբ» ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ժբ. օրենքով սահմանված կարգով բանկի կամ վարկային կազմակերպության սեփականությունը դարձած՝ անհատ ձեռնարկատեր եւ նոտար չհամարվող ֆիզիկական անձանց մինչ այդ պատկանող գրավի առարկայի օտարումը, ինչպես նաեւ օրենքով սահմանված կարգով հետադարձ հիփոթեքի պայմանագրի համաձայն բանկի կամ վարկային կազմակերպության սեփականությունը դարձած՝ անհատ ձեռնարկատեր եւ նոտար չհամարվող ֆիզիկական անձանց մինչեւ այդ պատկանող այն անշարժ գույքի օտարումը, որը այդ նույն հետադարձ հիփոթեքի պայմանագրի համաձայն ծանրաբեռնված էր հետադարձ հիփոթեքով: Սույն ենթակետի կիրառության իմաստով՝ գրավի առարկան (հետադարձ հիփոթեքով ծանրաբեռնված անշարժ գույքը) մինչեւ բանկի կամ վարկային կազմակերպության սեփականությունը դառնալը համարվում է անհատ ձեռնարկատեր եւ նոտար չհամարվող ֆիզիկական անձանց պատկանող, եթե գրավի առարկայի (հետադարձ հիփոթեքով ծանրաբեռնված անշարժ գույքի) նկատմամբ սեփականության իրավունքի վկայականում նշված չէ, որ այն պատկանում է տվյալ անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին,»:

Հոդված 2. Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր 19.1-ին կետ հետեւյալ բովանդակությամբ.

«19.1) Հետադարձ հիփոթեքի պայմանագրի շրջանակներում ստացվող պարբերական ամենամսյա վճարումները.»:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ~~պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից~~2027 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1307-06.04.2026-ՖՎ-011/1), ««ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-13071-06.04.2026-ՖՎ-011/1) ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-13072-06.04.2026-ՖՎ-011/1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1307-06.04.2026-ՖՎ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 226-րդ հոդվածի 5-րդ մասում «պարագրաֆում» բառը փոխարինել «պարագրաֆներում» բառով: Մինչդեռ նշված մասում «պարագրաֆում» բառը կիրառված է երկու անգամ, ուստի առաջարկում ենք, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, հստակեցնել, թե փոփոխությունը դրանցից որին է վերաբերում:	Ընդունվել է:	Ընդունվել է

2.	Կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 5-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր 2.1-ին պարագրաֆի վերնագրից հետո նշված «1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ՀԵՏԱԴԱՐՁ ՀԻՓՈԹԵՔԻ ՄԱՍԻՆ» բառերը հանել՝ հաշվի առնելով, որ 2.1-ին պարագրաֆը ենթավերնագրերի չի բաժանվում:	Ընդունվել է:	Ընդունվել է
3.	Կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 5-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող 272.1-ին, 272.2-րդ, 272.3-րդ և 272.7-րդ հոդվածներում վերանայել «այգետնակ (ամառանոց)» ձևակերպումը՝ ամառանոցը նախատեսելով որպես առանձին օբյեկտ և չնույնացնելով այն այգետնակի հետ՝ հիմք ընդունելով Օրենսգրքի 269-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումները:	Ընդունվել է:	Ընդունվել է
4.	Կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	Առաջարկում ենք՝ Նախագծի 5-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր 272 2-րդ հոդվածի 1-ին մասից հանել «, որի օրը սահմանվում է պայմանագրում» բառերը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հետադարձ հիփոթեքի պայմանագրով նախատեսված վճարումների կատարման ժամկետը որպես պայմանագրում ներառվող պարտադիր դրույթ արդեն իսկ ամրագրված է Օրենսգրքում լրացվող նոր 272.3-րդ հոդվածի 1-ին մասում:	Ընդունվել է:	Ընդունվել է

5.	Կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	Առաջարկում ենք՝ Նախագծի 5-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր 272 3-րդ հոդվածի 1-ին մասում որպես պայմանագրում ներառվող պարտադիր դրույթ նշել նաև պայմանագրով նախատեսված հաշվարկների, այդ թվում՝ տույժերի, տուգանքների եւ այլ լրացուցիչ վճարների հաշվարկման կարգը, մասնավորապես, հաշվի առնելով որ 272.7 հոդվածով սահմանվում է, որ գրավատուն իրավունք ունի «ցանկացած պահի ամբողջությամբ կամ մասնակի մարել մինչեւ տվյալ պահը առկա պարտավորությունը՝ պայմանագրով նախատեսված հաշվարկների կարգով՝ պայմանագրով սահմանված տույժերի, տուգանքների եւ այլ լրացուցիչ վճարների վճարմամբ»:	Ընդունվել է:	Ընդունվել է
6.	Կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	Իրավական որոշակիություն ապահովելու և հնարավոր տարընթերցումներից խուսափելու նպատակով առաջարկում ենք Նախագծի 5-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր 272.3-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «միայն» բառը:	Ընդունվել է:	Ընդունվել է
7.	Կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	Առաջարկում ենք՝ Նախագծի 5-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր 272.8-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում հստակ նշել, թե անշարժ գույքի հետ կապված ո՞ր ռիսկերն են ենթակա ապահովագրության:	Ընդունվել է:	Ընդունվել է

8.	Կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 5-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր 272.9-րդ հոդվածի 2-րդ մասում հստակ որպես պայմանագրի անբաժանելի մաս նախատեսել նաև օրենքով սահմանված կարգով իրականացված գույքի գնահատման հաշվետվությունը, որտեղ բավարար տեղեկություններ են ներկայացվում գույքի գնի հաշվարկման մեթոդների և դրա վրա ազդող գործոնների վերաբերյալ:	Ընդունվել է:	Ընդունվել է
9.	Կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 5-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր 272.9-րդ հոդվածի 8-րդ մասում հստակեցնել, թե 272.6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ գրավատուի մահվան հիմքի առկայության դեպքում գրավատուի իրավահաջորդի համար սահմանված վեցամսյա ժամկետը որ պահից է սկսվում հաշվարկվել՝ իրավական որոշակիություն ապահովելու և հնարավոր տարընթերցումներից խուսափելու նպատակով:	Ընդունվել է:	Ընդունվել է
10.	Կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 6-րդ հոդվածով Օրենսգրքի 1186-րդ հոդվածում նախատեսվող լրացման ձևակերպումը հստակեցնել՝ սահմանելով, որ ամուսնու բացառիկ սեփականության իրավունքով ամուսինների ընդհանուր համատեղ	Ընդունվել է:	Ընդունվել է

			սեփականություն հանդիսացող գույքը երկու ամուսինների մահից հետո ներառվում է համապատասխանաբար յուրաքանչյուր ամուսնու ժառանգության զանգվածում, իսկ առաջինը մահացած ամուսնու ժառանգությունը տվյալ գույքի մասով բացվում է երկրորդ ամուսնու մահվան օրը:		
11.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Ծովինար Վարդանյան	Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մաս	Առաջարկում ենք նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասով օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանել 2027 թվականի հունվարի 1-ը: Առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ հետադարձ հիփոթեքի համակարգը նոր է ներդրվելու և, որը վերաբերելու է հասարակության ֆինանսական գրագիտության առումով առավել խոցելի անձանց՝ տարիքային աշխատանքային կենսաթոշակի տարիքի քաղաքացիներին: Ուստի օրենքների նախագծերի փաթեթում առաջարկվող կարգավորումները պետք է միատեսակ ընկալելի լինեն թե՛ շահառուների, և թե՛ ֆինանսական կազմակերպությունների համար: Գտնում եմ, որ բանկերին և վարկային կազմակերպություններին անհրաժեշտ է հավելյալ ժամանակ՝ ֆինանսական համակարգում նոր ծառայության տեսակն առավել հստակ ձևավորելու համար:	Ընդունվել է:	Ընդունվել է

««ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-13071-06.04.2026-ՖՎ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածով Օրենքի 41-րդ հոդվածում նախատեսվող լրացման մեջ հստակ սահմանել, որ հետադարձ հիփոթեքի դադարման պետական գրանցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 272.6-րդ հոդվածով նախատեսված դադարման հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում՝ գրավառուի կամ այլ շահագրգիռ անձի դիմումի հիման վրա:	Ընդունվել է:	Ընդունվել է
2.	Կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 4-րդ հոդվածով Օրենքի 43-րդ հոդվածում կատարվող լրացումը նախատեսել 2.2-րդ մասի տեսքով՝ միաժամանակ հստակեցնելով ձևակերպումները և սահմանելով, որ ամուսնու բացառիկ սեփականության իրավունքի գրանցման համար անհրաժեշտ է առանձին դիմում:	Ընդունվել է:	Ընդունվել է
3.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Ծովինար Վարդանյան	Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մաս	Առաջարկում ենք նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասով օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանել 2027 թվականի հունվարի 1-ը: Առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ հետադարձ հիփոթեքի համակարգը նոր է ներդրվելու և, որը վերաբերելու է հասարակության	Ընդունվել է:	Ընդունվել է

			ֆինանսական գրագիտության առումով առավել խոցելի անձանց՝ տարիքային աշխատանքային կենսաթոշակի տարիքի քաղաքացիներին: Ուստի օրենքների նախագծերի փաթեթում առաջարկվող կարգավորումները պետք է միատեսակ ընկալելի լինեն թե՛ շահառուների, և թե՛ ֆինանսական կազմակերպությունների համար: Գտնում եմ, որ բանկերին և վարկային կազմակերպություններին անհրաժեշտ է հավելյալ ժամանակ՝ ֆինանսական համակարգում նոր ծառայության տեսակն առավել հստակ ձևավորելու համար:		
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-13072-06.04.2026-ՖՎ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Ծովինար Վարդանյան	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մաս	Առաջարկում ենք նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասով օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանել 2027 թվականի հունվարի 1-ը: Առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ հետադարձ հիփոթեքի համակարգը նոր է ներդրվելու և, որը վերաբերելու է հասարակության ֆինանսական գրագիտության առումով առավել խոցելի անձանց՝ տարիքային աշխատանքային կենսաթոշակի տարիքի քաղաքացիներին: Ուստի օրենքների նախագծերի փաթեթում առաջարկվող	Ընդունվել է:	Ընդունվել է

			կարգավորումները պետք է միատեսակ ընկալելի լինեն թե՛ շահառուների, և թե՛ ֆինանսական կազմակերպությունների համար: Գտնում եմ, որ բանկերին և վարկային կազմակերպություններին անհրաժեշտ է հավելյալ ժամանակ՝ ֆինանսական համակարգում նոր ծառայության տեսակն առավել հստակ ձևավորելու համար:		